ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 25

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 8 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. Պտղնի համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2017 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ:
2. Պտղնի համայնքի սեփականությունը հանդիսացող աղբատար մեքենան Հրազդանի համայնքապետարանին ժամանակավոր անհատույց օգտագործման տրամադրելու մասին:
3. Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
2. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
3. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 26

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ընդունել ի գիտություն Պտղնի համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2017 թվականի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
2. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
3. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

Հավելված
Պտղնի համայնքի ավագանու
2018 թվականի օգոստոսի 10-ի
N 26 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պտղնի 2018

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ,

Պտղնի համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադությամբ, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները՝ նախադպրոցական և արտադպրոցական կրթություն և դաստիարակություն, մշակութային, սպորտային ծառայություններ և այլն:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի, Պտղնի համայնքը գտնվում է Կոտայքի մարզում Հրազդան գետի ձախ ափին Աբովյան քաղաքից 7կմ հարավ-արևմուտք: Հեռավորությունը մայրաքաղաքից 12կմ, մարզկենտրոն Հրազդանից 35կմ, ծովի մակերևույթից բարձրությունը 1325մ: Պտղնի համայնքը հիմնադրվել է 1828 թվականին:

2.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2018թվականի հունվարի 1-ի դրությամբ Պտղնի համայնքում ապրում է 1771 բնակիչ, որոնցից տղամարդիկ կազմում են 48.5%-ը:

Աղյուսակ 1.

Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները

(01.01.2018 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	2017
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	1771
	Տղամարդիկ	858
	Կանայք	913
	0-6 տարեկան երեխաներ	153
	7-17 տարեկան դպրոցականներ	238
	18-62տարեկան	1224
	63 և բարձր	156
2.	Թոշակառուներ	156
3.	Աշխատունակներ	1224

4.	Գրանցված աշխատողների թիվը	220
5.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	11
6.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	0
9.	Փախստականներ	10
10.	Գործազուրկներ	1817
11.	Զբաղվածներ	800
12.	Հաշմանդամներ, այդ թվում՝	49
	Մանկուց հաշմանդամներ	1
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	36
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	2
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	25
	Անօթևան ընտանիքներ	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	10
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	43
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	43

Համայնքն ունի 480 տնային տնտեսություն: Վերջին տարիներին նկատվում է ծնելիության աճ:

2.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Պտղնի համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 7 անդամներով: Պտղնի համայնքի աշխատակազմը բաղկացած է 9 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը հիմնանորոգվել է 2006 թվականին: Այն գտնվում է Պտղնի համայնքի սկզբնամասում: Աշխատակազմի աշխատանքի կատարման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, որը լիովին բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Սակայն այս ամենով հանդերձ անհրաժեշտություն է առաջացել վերանորոգել համայնքապետարանի դահլիճը և կահավորել գույքով և տեխնիկայով, քանի որ ըստ «Տեղական ինքնակառավարման» օրենքի պահանջի համայնքի ավագանու նիստերը պետք է հեռառձակվեն ուղղիղ եթերով: Դահլիճում կանցկացվեն նաև հանրային մեծ քննարկումներ և այլ կարևոր հանդիպումներ:

2017 թվականին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմը կազմված է եղել 12 աշխատակցով:

3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ և ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

3.1 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պտղնի համայնքում 2017-2018թթ. տրվել է 10 շինարարության թույլտվություն, սա վկայում է այն մասին, որ համայնքը միշտ զարգացման մեջ է: 2017 թվականին համայնքապետարանի միջոցներով պատվիրվել է համայնքի տարածական զարգացումը սահմանող պարզեցված գլխավոր հատակագիծ, որի համար ծախսվել է 7000000 դրամ: 2017 թվականին համայնքապետարանի միջոցով համայնքում շաբաթական 5 անգամ իրականացվել է աղբահանության աշխատանքներ: 2017 թվականին համայնքում աղբահանության նպատակով ծախսվել է շուրջ 4.650.000 դրամ:

Համայնքն ունի 3 գերեզմանատուն:

3.2 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 3.3ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2017թվականի հուլիսի 1-ի դրությամբ համայնքի հողային տարածքը կազմում է 799.45 հա, որից

- Վարելահող-75.08հա
- Արոտավայրեր-105.66 հա
- Բազմամյա տնկարկներ – 2.89հա
- Բնակավայրերի հողեր -265.56հա
- Ջրային ֆոնդի հողեր – 6.39հա
- Այլ հողեր – 300.75հա
- Գյուղ արտադրական հողեր-10.81հա
- Էներգետիկայի, կապի տրանսպ. կոմունալ ենթ. հողեր-16.35 հա

Հողերի սեփականաշնորհմանը մասնակցել է 282 ընտանիք, մեկ հողաբաժնի չափը կազմել է 0.15 հա, բնակավայրի տարածքը կազմում է 196.28 հա:

3.4 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պտղնի համայնքում գյուղացիական տնտեսությունները զբաղված են դաշտավարությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ, ընդհանրապես գյուղատնտեսության բնագավառում զբաղված է համայնքի բնակչության 48 %-ը: Համայնքում 2018թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա է 265 խոշոր եղջրավոր անասուններ, որից կովեր՝ 129 գլուխ, 59 գլուխ խոզեր, 156 գլուխ ոչխարներ և 1147 հատ թռչուններ և 115 հատ մեղվաընտանիք:

3.5 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2017 թվականին համայնքում աղբահանության գործընթացն իրականացվել է շաբաթական 5 անգամ համայնքի աղբատար մեքենայով: Համայնքում ԵՎրասիԿան զարգացման բանկի միջոցներով իրականացվում է ինքնահոս ոռոգ ման ջրագծի կառուցման աշխատանքներ, որը գտնվում է նախագծման փուլում:

3.6 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2017 թվականին կատարվել է շուրջ 3000000 դրամի ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ:

3.7 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պտղնի համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են խառը ապրանքների խանութներ, հանրային սննդի սպասարկման օբյեկտներ, հյուրանոցներ և այլն:

Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները ներկայացված են **աղյուսակ 2**-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 2.

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌ 01.01.2018Թ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Արտադրական կազմակերպություններ	Առևտրային կազմակերպություններ	Ծառայություններ մատուցող կազմակերպություններ
✓ «ԱՐԱՍՈ» ՍՊԸ քաղցրավենիքի արտադրություն ✓ «ՊՏՂՆԻ ԳՈԼԴ» ՍՊԸ, գինու արտադրություն ✓ «Տիգրան Ազիզյան» Ա/Ձ թխվածքի արտադրություն	✓ 16 (տասնվեց) սննդի և տնտեսական ապրանքների խանութներ	✓ 2 (երկու) հյուրանոց

Առևտրի և սպասարկման ոլորտներում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 34 մարդ:

3.8 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 1 միջնակարգ դպրոց, որտեղ 2017 թվականին սովորել են 164 երեխա և 1 նախակրթարան, որտեղ հաճախում են 34 երեխա: Աշխատում են 24 ուսուցիչներ և 10 սպասարկող անձնակազմ: Համայնքի դպրոցը գտնվում է վերանորոգված վիճակում:

3.9 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Դպրոցում գործում են կարատեի, ժողովրդական պարի և ասմունքի խմբակներ: Այստեղ սովորում են շուրջ 57 երեխա: Տարվա ընթացքում կազմակերպվում է 6-7 միջոցառումներ նվիրված միջազգային, հանրապետական և համայնքային տոներին: Համայնքապետարանի շենքում է գտնվում համայնքի գրադարանը, որտեղ կա շուրջ 4264 կտոր գրականություն և 2017 թվականին ունեցել է 210 ընթերցող: Համայնքն ունի www.ptghni.am ինտերնետային վեբ կայքը, որտեղ տեղ է գտնում համայնքային նորությունները, համայնքում իրականացվող բոլոր միջոցառումները, համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումները, ինչպես նաև հայտարարություններ:

3.10 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքը ունի մեկ բուժ. կետ, որտեղ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ աշխատում է 1 բժիշկ և 1 բուժքույր, այցելուների թիվը 2017 թվականի ընթացքում կազմել է 620 մարդ, 2017 թվականի ընթացքում համայնքում ծնվել է 14 երեխա: Բուժ. Կետը ամբողջովին վերանորոգված է:

3.11 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքն ունի 2 ամրոց, 1 գյուղատեղի, Հայրենական Մեծ պատերազմի զոհվածների հուշարձան-կոթող, 2 մատուռ և «Պտղնավանք» եկեղեցի: Համայնքում չկան այլ զբոսաշրջության համար հետաքրքրիր վայրեր:

3.12 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկան աշխատանքի և սոցիալական ծառայության գործակալություններ: Բնակիչները հիմնականում աշխատանք են փնտրում Երևան և Աբովյան քաղաքներում, իսկ սոցիալական ծառայությունը գտնվում է Աբովյան քաղաքում, որը համայնքից հեռու է 10 կմ: Համայնքում նպաստ ստացող ընտանիքների թիվը 2017 թվականին կազմում է 36 ընտանիք: 2017 թվականին համայնքի սոցիալապես անապահով 18 ընտանիքների տրամադրվել է 50000-ական ՀՀ դրամ դրամական օգնություն, 2 զոհվածի ընտանիքների տրամադրվել է 50000-ական ՀՀ դրամ դրամական օգնություն, 18 նոր ծնված երեխաների ընտանիքներին տրամադրվել է միանվագ դրամական օգնություն 30000-ական ՀՀ դրամ և 17 ընտանիքների տրամադրվել է 70000-ական ՀՀ դրամ թաղման ծախսերի փոխհատուցման գումար:

3.13 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Պտղնի համայնքի բնակչությունը մասնակցում է տեղական ինքնակառավարման աշխատանքներին: Համայնքում կատարվող յուրաքանչյուր խոշոր ներդրում, ինչպես նաև համայնքի զարգացման ծրագրերը, համայնքի բյուջեի կատարողականը, քաղաքաշինական ծրագրերը կյանքի կոչելուց առաջ համայնքում կատարվել է հանրային բաց լսումներ և հաշվի են առնվել համայնքի բնակչության կարծիքը, 2017 թվականին կատարվել են 2 հանրային քննարկումներ: Բացի դրանից համայնքի www.ptghni.am վեբ կայքի, ինչպես նաև համայնքում տեղադրված հայտարարությունների ցուցատախտակների միջոցով բնակչությանն իրազեկվում է համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կայացրած որոշումները, համայնքի առաջնահերթ խնդիրներից ըստ բնակիչների որոնք են կարևոր: 2017 թվականին համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 79 որոշում, 40 կարգադրություն, համայնքի ավագանու կողմից գումարվել է 10 նիստ, որոնց ընթացքում կայացվել է 40 որոշում: Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի N 14-Ն, N 15-Ն և N 16-Ն որոշումներով հաստատվել է համապատասխանաբար «Պտղնի

համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը», «Պտղնի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը», «Պտղնի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգ», որով համայնքի բնակչությունը մասնակցում է համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման), համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխություն-ների կատարման գործընթացներին:

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղետների ռիսկերի կառավարման համար, Պտղնի համայնքի ղեկավարի 2015 թվականի մարտի 20-ի N 12-ի որոշմամբ ստեղծվել է Կոտայքի մարզի Պտղնի համայնքի բնակչության տարահանման պլան, որը երկողմանի հաստատվել է նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՎԻՐԱԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 27

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2018 թվականի օգոստոսի 01-ի N 01/15.1/3790-18 գրությունը՝ ***ավագանին որոշում է.***

1. Պտղնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող ZIL-130 (KO-445) մակնիշի 259LO43 պետ. համարանիշի աղբատար մեքենան անհատույց օգտագործման 1 տարի ժամկետով տրամադրել Հրազդանի համայնքապետարանին:
2. Սահմանված կարգով կնքել անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
2. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
3. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 28

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3 հոդվածի պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 13-ի ««Հողաչափ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Պտղնի համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեման հաստատելու մասին» N 5 որոշումը՝ ***ավագանին որոշում է.***

1. Համաձայն գոտիավորման սխեմայի փոփոխել Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող (ծածկագիր 07-054-0330-0023) 1.34 հա անտառային ֆոնդի հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նշանակության վարելահողի (4-րդ կարգ, անջրդի) համաձայն հողամասի սխեմայի:
2. Նշված փոփոխությունը ներառել համայնքի հողերի ընթացիկ տարվա հաշվեկշռում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ
2. ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ
3. ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

Виписка земельної ділянки



Перший заступник голови Ін. Ярмуш